ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ԷՍՏՐՈԳԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

Ե՞ՐԲ Է ՑՈՒՑՎԱԾ ՏԵՂԱՅԻՆ ԷՍՏՐՈԳԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՆ

Տեղային Էստրոգենային թերապիան ցուցված է հեշտոցի չորության բուժման նպատակով: Տվյալ խնդիրն առաջանում է դաշտանադադարի տարիքի կանանց շրջանում, քանի որ ձվարաններն այլևս բավարար քանակի էստրոգեններ չեն արտադրում:

Կանայք կարող են գանգատվել սեռական հարաբերության ժամանակ այրոցի զգացողությունից, քսման հեղուկի բացակայությունից, չորությունից:

Էստրոգենների պակասի հետևանքով կարող են առաջանալ միզարձակման հետ կապված խնդիրներ՝ հաճախամիզություն, անմիզապահություն, միզուղիների բորբոքումներ:

Ի՞ՆՉ Է ՏԵՂԱՅԻՆ ԷՍՏՐՈԳԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՆ

Տեղային Էստրոգենային թերապիան էստրոգենի ներհեշտոցային կիրառումն է: Այն լավացնում է հեշտոցի լորձաթաղանթի որակը՝ խոնավեցնելով այն, կարգավորելով թթվայնությունը և հաստությունը:

Տեղային թերապիայի առավելությունն այն է, որ նվազագույն չափաբաժիններով հնարավոր է ստանալ առավելագույն արդյունք և միաժամանակ նվազագույնի հասցնել էստրոգենի ազդեցությունը կրծքագեղձերի կամ արգանդի վրա:

Հեշտոցային էստրոգենները ներկայացված են հեշտոցային մոմիկների, քսուքների, գելերի և էստրոգենային օղերի ձևով:

ԱՐԴՅՈ՞Ք ՏԵՂԱՅԻՆ ՀՈՐՄՈՆԱԼ ԹԵՐԱՊԻԱՆ ԱՆՎՏԱՆԳ Է

Հեշտոցային էստրոգենային միջոցները ազդում են տեղային՝ բարելավելով հեշտոցի պատերի և լորձաթաղանթի վիճակը:

Եթե կինն ունեցել է կրծքագեղձի քաղցկեղ և գանգատվում է հեշտոցի չորությունից, որը չի կարգավորվում հեշտոցային խոնավեցնող միջոցների կիրառմամբ (lubrigel), ապա էստրոգենների տեղային կիրառումը համարվում է ընտրության միջոց:

Ուրոգինեկոլոգը պետք է համաձայնեցնի հեշտոցային էստրոգենների նշանակումը ուռուցքաբանի հետ:

Ըստ հետազոտությունների տեղային էստրոգենային թերապիան հակացուցված չէ կրծքագեղձի քաղցկեղի դեպքում:

Ո՞Ր ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

Բժիշկը կարող է որոշել, թե յուրաքանչյուր կնոջ համար տեղային էստրոգենային միջոցներից որն է կիրառելի: Հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր տեղային էստրոգենային միջոցները հավասարապես արդյունավետ են ախտանիշները վերացնելու համար:



Արդյո՞ք կինն ունի տեղային էստրոգենային թերապիայի կարիք, եթե արդեն հորմոն փոխարինող թերապիա է ընդունում:

Եթե կինն ընդունում է հորմոն փոխարինող թերապիա, բայց շարունակում է հեշտոցային չորության ախտանիշներ ունենալ, ապա բժիշկը կարող է նշանակել նաև հեշտոցային էստրոգեններ:

Սա հատկապես ընդունելի է, եթե կինը հորմոն փոխարինող թերապիայի փոքր չափաբաժին է ստանում:

Հեշտոցային քսուքները կարող են նաև օգտակար լինել, եթե հիմնական ախտանիշը հեշտոցի չորությունն է սեռական հարաբերության ժամանակ: Հեշտոցային խոնավեցնող միջոցները կարող են օգնել վերականգնել խոնավությունը և կարող են օգտագործվել մի քանի օրը մեկ անգամ՝ ըստ անհրաժեշտության:

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart